

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4  
ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊՈԱԿ

ՏՆՕՐԵՆ



ГНО "ГЮМРИЙСКОЕ ГОСУДАРСТВЕННОЕ  
РЕМЕСЛЕННОЕ УЧИЛИЩЕ N 4"  
МИНИСТЕРСТВА ОБРАЗОВАНИЯ,  
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ДИРЕКТОР

"GYUMRI CRAFTSMAN STATE SCHOOL N4"  
SNPO OF THE MINISTRY OF EDUCATION,  
SCIENCE, CULTURE AND SPORT  
OF THE REPUBLIC OF ARMENIA

DIRECTOR

ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի -3126, «Անի» թաղամաս, 11 փողոց, 5/2, Հեռ./Տեղ./Tel. (0312) 6-64-07, 6-64-08, տնօրեն՝ (094) 84-45-02  
РА, Ширакская область, г. Гюмри -3126, "Ани" квартал, улица11, 5/2, 5/2, St. 11, "Ani" District, Gyumri-3126, Shirak Region, RA  
E-mail: k.aharonyan@entanik.am, info@gyumriusumnaran4.am, www.gyumriusumnaran4.am

N 137-21  
27.08.2021թ.

ՀՀ ԿԳՄՍ նախարար  
պարոն Վահրամ Դումանյանին

Հարգելի պարոն նախարար.

Ղեկավարվելով ԿԳՄՍՆ 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 48-Ն հրամանով հաստատված՝  
«Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական պետական ուսումնական  
հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի  
կազմակերպման և անցկացման» կարգի 8-րդ կետի պահանջով՝ տեղեկացնում եմ, որ  
Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում առկա են հետևյալ թափուր  
տեղերը.

- «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» - մասնագիտության գծով արտադրական ուսուցման վարպետ, համատեղությամբ մասնագիտական մոդուլներ դասավանդող /աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2021-2022 ուսումնական տարում՝ 1 դրույք վարպետ, մասնագիտական մոդուլների դասավանդում՝ շաբաթական 3 դասաժամ/
- «Գեղանկարչություն և քանդակագործություն» մասնագիտության գծով արտադրական ուսուցման վարպետ, համատեղությամբ մասնագիտական մոդուլներ դասավանդող /աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2021-2022 ուսումնական տարում՝ 0,5 դրույք վարպետ, մասնագիտական մոդուլների դասավանդում՝ շաբաթական 2 դասաժամ/
- Անգլերեն լեզվի դասախոս /աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2021-2022 ուսումնական տարում՝ շաբաթական 8 դասաժամ/

Թափուր տեղերի համապատասխանատվության նկատմամբ սահմանված պահանջներն են՝

1. արտադրական ուսուցման վարպետի և մասնագիտական մոդուլների դասավանդողի համար.
  - տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և միջին կամ բարձրագույն համապատասխան մասնագիտական կրթություն, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվում:
2. անգլերեն լեզվի դասախոսի համար.
  - բարձրագույն կրթություն՝ անգլերեն լեզվի մանկավարժի որակավորմամբ:

Հարգանքով՝

Տնօրենի պաշտոնակատար՝



Ք. Ահարոնյան